

մի թագաւորութիւն կազմողը : Օսմանյիներու և Պարսիկներու փոփոխակի արշաւանքները դարձեալ առիթ կուտան Հայերուն ու Քիւրդերուն դիմել նախարարական իշխանութեան ձեւին , կամ ուրիշ բոլոր այդ կազմութիւնը կզծուած ժամանակ , Տէրէ-Պէյութեան , մանաւանդ որ Հայաստանի ու Քիւրդիստանի լեռնոտ դիրքերը , ճանապարհներու անհաղորդակցութիւնը , առանց ատոր այ միշտ նշատած են պահպանելու իշխանութեան այդ հին ձեւը :

Ըստ Քիւրդական աղբիւրներու (\*), Սուլթան Սէլէմէն մինչև Սուլթան Մահմուտը Տէրէ-Պէյական իշխանութիւնը մնաց կանգուն իւր աւազակային զրութեան մէջ . Օսմանեան Սուլթանները չը կարողանալով կատարելապէս լրացնել իրենց նւաճումները , վերջապէս կ'ատիպուին Սուլթան Մահմուտի օրով պաշտօնապէս ճանչնալ Տէրէ-Պէյական իշխանութիւնները :

Սուլթան Մահմուտը իւրեմաներէ կազմուած ժողով մը կը զրկէ Հաստան ու Քիւրդիստան , կը գծէ ամէն մէկ Տէրէ-Պէյի իշխանութեան սահմանը , ու կը ճանչնայ այդ իշխանութիւնները իրաւասու՝ ամէն մէկը իր սահմանին մէջ : Տէրէ-Պէյական իշխանութիւնները այսպիսով է որ կուենեան իրենց սակաւութեան ֆէրմանները :

Հետաքրքիր կը լինի սալ մի քանի գծեր Տէրէ-Պէյական կեանքէն :

---

(\*) Պետրիէն . (Քիւրդ գրագէտ)